ԱՐՏԱԿ ԴՊԻՐ ՁՈՓԻԿՅԱՆ

Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի
Դ լսարանի սան

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տիեզերքի մեջ՝
Ոլոր ու մոլոր ճանապարհներով,
Մի խենթ գնացք է քո կյանքը անցնող:
Իսկ վագոնները տարիներն են քո.
Անցնում են հերթով,
Գնում սրընթաց,
Թե ճանապարհին խութ կա թաքնված՝
Այդ խենթ գնացքը,
Դեռ իր անցնելիք երթը չավարտած,
Հենց այդ խութի մոտ,
Կես ճանապարհին
Կանգ կառնի հանկարծ:
Իսկ թե ճամփեքը
Ու կամուրջները ամուր են սարքված,
Երկաթգծերը զուգահեռ են, ճիշտ,
Եվ ոչ մի տեղում չեն կոտրած, խաչված,
Այնժամ քո կյանքը՝ այդ խենթ գնացքը,
Արդե՞ն անկասկած
Վերջին կայանում՝
Ողջ վագոններով, կկանգնի...
Կկանգնի՝ երթն իր ավարտած...

15.09.96 թ.

ԱՂԵՐՍԱՆՔ

Կատարելությո՛ւն,
Բաց Քո դռները
Հյուրընկալիր ինձ ինչպես որ կուզես,
Որպես հատուցում իմ տվածների,
Որոնք զոհեցի ու նվիրեցի
Քո կապտամշուշ
Բարդ ճանապարհին:
Խնդրում եմ, տո՛ւր ինձ,
Տո՛ւր Քո երկաթյա համբերությունը,
Աղմուկների մեջ՝

Քո նախանձելի անդորրությունը,
Հզորությունը Քո գագաթների,
Ներշնչումների
Ու ապրումների անհունությունը:
Քո անկումների անհիմնությունը,
Սակայն և նո՛ւյնիսկ անկումից հետո
Նորից հարություն առնել-կանգնելու
Կարողությունը:
Նետահարելու դիպուկությունը
Նվիրիր դու ինձ,
Քո գագաթներում
Ճախրելու կապույտ թևերը տուր ինձ:
Եվ խիզախելու քաջությունը տուր.
Տուր ա՛յն ամենը,
Որով ես ապրեմ
Եվ արհամարհեմ
Ինձ հետապնդող,
Օրեցօր աճող
Ու ինձ մոտեցող
Այս «մա՛հ» կոչվածի
Անմահությունը:

5.09.96 թ.

ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆ

Ես հազար ու մի գանձեր պեղեցի,
Գտա անսպառ ոսկի ու արծաթ,
Ու հազարներով տունս բերեցի,
Սակայն մնացի թշվառ ու աղքատ:

Մարդիկ տեսնելով գանձերս անգին՝
Ինձ համարեցին երջանիկ, գերմարդ,
Սակայն լալիս էր իմ քաղցած հոգին
Ես գանձերիս մեջ՝ թշվառ ու աղքատ:

Ավա՜ղ, կար մի հանք, որի ճամփան ես
Որոնում էի հույսով, անընդհատ...
Ու մինչ գտնես, չոր ծառի նման
Տոչորվում էի թշվառ ու՝աղքատ:

Դա սրտիդ դուռն էր, Ով հզոր իմ Տեր,
Որ բացեցիր ինձ, ու ես ներս մտա,
Ծով գանձերի մեջ ես՝ թշվառ գերիս,
Հարստությունը Քո սրտո՛ւմ գտա:

22.08.96 թ.